ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ*

Արարատ Վարդանյան

Բանալի բառեր՝ Հայ կրթական հիմնարկություն, բարեգործություն, Հայաստանի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, դպրոցների կառուցում և վերանորոգում, ուսուցիչների վերապատրաստում, կրթաթոշակի ծրագիր, ասմունքի համահայկական փառատոն

Հայ կրթական հիմնարկությունը (ՀԿՀ, անգլերեն՝ Armenian Educational Foundation) հիմնվել է 1950 թվականին Լոս Անջելեսում՝ ԱՄՆ-ի և սփյուռքի այլ գաղութների հայկական դպրոցներին և ուսանողներին նյութական օգնություն ցույց տալու, հայկական դպրոցների ստեղծմանն օժանդակելու, հայագիտական կազմակերպություններին աջակցելու, կրթության համար հատկացված կտակները գործադրելու նպատակով: Հիմնադիրներն են՝ ամերիկահայ համայնքի ներկայացուցիչներ Արշակ Տիգրանյանը, Հերի Քարեյանը, Բեն Ղազարյանը, Մարդ Փիլոյանը, Ալեք Փիլիպոսը, Արպակսատ Սեդրակյանը [1]: ՀԿՀ-ն գտնվում է ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքում:

ՀԿՀ նյութական աղբյուրներն են նվիրատվությունները, կտակված ժառանգությունները, ավանդները և անդամավճարները: Հիմնարկության պատկանող դրամագլխի մեծ մասը գոյացել է կտակների և ավանդների ձևով մնայուն նվիրատվություններից, ինչպես նաև պարզ նվիրատվություններից: Այս ամենը հնարավորություն են ընձեռել ՀԿՀ-ին կազմակերպելու սփյուռքահայ երիտասարդության կրթության, ինչպես նաև հայկական դպրոցներին նյութական օժանդակություն տրամադրելու գործը:

Սփյուռքահայ երիտասարդության ազգային ինքնության պահպանման, հայեցի կրթության և դաստիարակման նպատակով ՀԿՀ-ն կառուցել և նյութական օժանդակություն է տրամադրել բազմաթիվ հայկական ամենօրյա վարժարանների աշխարհի տարբեր երկրներում: Հիմնարկության կառուցած առաջին երկու դպրոցներն են՝ «Լևոն և Սոֆյա Հակոբյան» հայկական վարժարանը Աթենքում (Հունաստան) և «Լևոն և Սոֆյա Հակոբյան» քոլեջը Բուրջ Համուդում (Լիբանան): Հիմնարկությունը նաև մասնակցություն է ունեցել Կալիֆորնիայում առաջին երկու հայկական ամենօրյա դպրոցների հիմնադրության և կառուցման աշխատանքներում. դրանք են՝ Սրբոց Նահատակաց Ֆերրահյան տարրական և միջնակարգ վարժարանը և Մեսրոպյան վարժարանը [2]:

Տարիների ընթացքում ՀԿՀ կողմից օժանդակություն ստացած ամենօրյա վարժարաններից և նախակրթարաններից են՝

- *Ռոզ և Ալեք Փիլիպոս հայկական վարժարան - Հոլիվուդ, Կալիֆորնիա*
- *Վահան և Անուշ Շամլյան հայկական վարժարան - Գլենդել, Կալիֆորնիա*
- *Արի Կիրակոս Մինասյան հայկական վարժարան – Սանթա Աննա, Կալիֆորնիա*
- *Ամերիկահայ միջազգային քոլեջ – Լա Վերն, Կալիֆորնիա*
- *Հայկական համայնքային վարժարան – Ֆրեզնո, Կալիֆորնիա*
- *Քրուզյան - Զաքարյան Վասպուրական հայկական վարժարան – Սան Ֆրանսիսկո, Կալիֆորնիա*
- *Շարլոթ և Էլիզ Մերտինյան վարժարան – Շերմըն Օաքս, Կալիֆորնիա*

---

* Հոդվածն ընդունվել է 28.12.2015:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ պատմության ամբիոնը:

- Արշակ Տիգրանյան հայկական վարժարան – Լոս Անջելես, Կալիֆորնիա
- Հայ քույրերի վարժարան – Ֆիլադելֆիա, Փենսիլվանիա
- Ս.Սահակ և Ս.Մեսրոպ հայկական վարժարան – Փրովիդենս, Ռոդ Այլընդ
- Ս.Գրիգոր Լուսավորիչ հայկական վարժարան – Վուդսայդ, Նյու Յորք
- Ս.Ստեփանոս ամենօրյա վարժարան – Վաթըրթաուն, Մասաչուսեթ
- Ս.Հակոբ հայկական ամենօրյա վարժարան – Մոնթրեալ, Կանադա
- Քոլոլյան-Բաբայան հայկական վարժարան – Օնթարիո, Կանադա
- Ս.Խաչ հայկական ամենօրյա վարժարան – Օնթարիո, Կանադա
- Նշան Փալանջյան ճեմարան - Բեյրութ, Լիբանան
- Գալուստ Կյուլպենկյան երկրորդական վարժարան - Անճար, Լիբանան [3]:

Հիմնարկության նպատակներն իրագործելու համար ստեղծված «Սոֆիա Հակոբյան» հիմնադրամը հովանավորել է Բերկլիի և Լոս Անջելեսի համալսարանների հայագիտական ամբիոնները [4]:

Հայ կրթական հիմնարկությունը Հայաստանում սկսել է գործել 1988-ի Սպիտակի աղետալի երկրաշարժից հետո: 1994-ին բացվեց ՀԿՀ-ի մասնաճյուղը Երևանում: Նրա գործունեության հիմնական ուղղություններից էր հայրենիքում կրթական ծրագրերի միջոցով երեխաների կրթության գործի կազմակերպումն ու ուսման նպաստավոր պայմանների ստեղծումը, դպրոցների կառուցումը և վերանորոգումը: ՀԿՀ առաջին խոշոր ձեռնարկումը Շիրակի մարզի Կրաշեն գյուղի տարրական դպրոցի և մանկապարտեզի վերակառուցումն էր: Սավի և Ռալֆ Թուֆենքյանների նվիրատվությամբ վերակառուցվեցին նաև Գյումրու հմ.5 և Ռիչարդ Թուֆենքյան դպրոցը [5]:

Հետագա տարիներին ՀԿՀ մասնաճյուղի միջոցով Հայաստանում վերանորոգվել և կառուցվել են տասնյակ դպրոցներ (տես աղյուսակը):

Հայ կրթական հիմնարկության կողմից ՀՀ-ում նորոգված/կառուցված դպրոցներ[6]

	ք. ԵՐԵՎԱՆ	37	գ. Ղսեղ Հ.Թ. տուն
1	Վ.Սարոյանի անվ.	38	ք. Պլավերդի#11
2	Մ.Իշխանի անվ.	39	գ. Արծնի
3	Եր. պետ. Կոնս. դահլիճ.	40	գ. Մեծ Այրում
	ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ	41	ք. Վանաձոր#23
4	գ. Փարպի	42	գ. Այգեհատ
5	գ. Արագած	43	գ. Հաղպատ
6	գ. Օրգով	44	գ. Մղարթ
7	գ. Մուղնի	45	գ. Եղեգնուտ
	ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ	46	գ. Աքորի
8	գ. Վեր. Արտաշատ	47	գ. Աթան
9	գ. Բերդիկ	48	գ. Քարինջ
10	գ. Պ. Սևակ	49	գ. Մարց
11	գ. Սուրենավան	50	գ. Սինիձոր
12	գ. Խոր Վիրապ	51	գ. Հագվի
	ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ		**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
13	գ. Նոր Արտագերս	52	գ. Բջնի
14	գ. Տալվորիկ	53	գ. Գառնի#1

15	Վաղարշապատ#12	54	գ. Գողթ
16	Վաղարշապատ#9	55	գ. Պռոշյան
17	գ. Արաքս		**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ	56	գ. Կրաշեն
18	գ. Այրք	57	բ. Գյումրի Ռ. Թուֆ.
19	գ. Ակունք	58	բ. Գյումրի#41
20	գ. Աստղաձոր	59	գ. Սարատակ
21	գ. Անտառամեջ	60	գ. Աղին
22	գ. Արծվանիստ		**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
23	գ. Գեղաքար	61	բ. Գորիս ուս. դպր.
24	գ. Նորատուս#1	62	գ. Կարճևան
25	գ. Լուսակունք	63	գ. Ծավ
26	գ. Վարդենիկ Ռ.Հ	64	գ. Վաչագան
27	բ. Սևան#1	65	գ. Աղվանի
28	գ. Սարուխան	66	գ. Նորաշենիկ
	ԼՈՌԻԻ ՄԱՐԶ		**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
29	գ. Քարաձոր	67	գ. Արենի
30	գ.Լորուտ	68	գ. Մարտիրոս
31	գ. Թեղուտ	69	գ. Փոռ
32	գ. Դսեղ	70	գ. Եղեգիս
33	գ. Դարպաս	71	գ. Արին
34	բ. Ալավերդի#12	72	գ. Մոզրով
35	բ. Վանաձոր#29		**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
36	գ. Դեբեդ	73	գ. Իծաքար

74	գ. Լուսահովիտ
75	գ. Նորաշեն
76	գ. Ակնաղբյուր
77	գ. Ենոքավան
78	գ. Թովուզ
79	գ. Ձորաթան
80	գ. Ներքին Գոշ
81	բ. Դիլիջան h1 հատուկ. դպ.
82	բ. Դիլիջան մանկ. առողջար.

Արցախում մեծ թիվ էին կազմում այն դպրոցները, որոնք ունեին վերանորոգման կարիք: Կարևորելով մատաղ սերնդի կրթության գործը՝ ՀԿՀ 1999 թվականից սկսեց գործել ԼՂՀ-ում՝ կառուցելով և վերանորոգելով մի քանի տասնյակ դպրոցներ:

Հայ կրթական հիմնարկության ՀՀ մասնաճյուղի և հովանավորների ֆինանսավորմամբ իրականացվել են ԼՂՀ Մարտունու շրջանի բ.Ճարտար, Թաղավարդ, Խերխան, Մսմնա, Կավահան, Պառավաթումբ [7], Խնուշինակ [8], Կաղարծի գյուղերի և Մարտունի քաղաքի [9], ավելի ուշ Ձարդանաշեն, Ավդուռ, Հացի, Քարահունջ, Վարանդա, Մյուրիշեն գյուղերի դպրոցների վերանորոգումը:

Հայ կրթական հիմնարկության կողմից Արցախում վերանորոգված և կառուցված դպրոցների ցանկ [10]

	ք. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ	15	գ. Ձագլիկ
1	Ռ. Թուֆենքյան հ. 3	16	գ. Ծաղկաշեն
2	Ստեփանակերտ հ. 4	17	գ. Ծմակահող
3	Արցախի պետ.համալսարանի հանրակացարան	18	գ. Աղաբեկալանջ
ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆ		19	գ. Գառնաքար
4	գ. Հիլիս	**ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆ**	
5	գ. Սղնախ	20	գ. Բերդաձոր
6	գ. Խնածախ	21	Շուշի երաժշտակ.
7	գ. Դահրավ	22	գ. Քարին Տակ 2-րդ փուլ
8	գ. Ձրաղացներ	23	գ. Հին Շեն
9	գ. Հարավ	**ՔԱՐԱԿԱՃԱՌԻ ՇՐՋԱՆ**	
10	գ. Մադաթաշեն	24	գ. Չարեքթար
11	գ. Ծաղկաշատ	25	գ. Ձուար
ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ		26	գ. Եղեգնուտ
12	գ. Մեծ Թաղեր	27	գ. Դադիվանք
13	գ. Ձրակուս	28	գ. Նոր Մանաշիդ
14	գ. Առաջամուղ	**ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆ**	
ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ		29	ք. Կովսական

30	գ. Հայթաղ
31	գ. Մովսեսաշեն
32	գ. Հարար
33	գ. Աղավնատուն
34	գ. Հիմնաշեն
35	գ. Հակ
36	գ. Դիցմայրի
37	գ. Հակարի/Մարաթուկ
38	գ. Կերեն
39	գ. Ձորախաչ
40	ք. Բերձոր, գիշերօթիկ
41	գ. Տիգրանական
42	գ. Վարդուտ
43	գ. Քարեգահ, երիտասարդական տան շենքը
44	գ. Մշենի

ՀԿՀ իրականացրել է նաև Քաշաթաղի շրջանի Վարդուտ գյուղի դպրոցի բակի [11] և Շուշի քաղաքի երաժշտական դպրոցի բակի բարեկարգման աշխատանքները [12], 2015-ին նույնանման աշխատանքներ է սկսել Մարտակերտի շրջանի Գառնաքար դպրոցի համար: Բացի այդ ամենից՝ հիմնարկությունը ԼՂՀ-ում կառուցված և վերանորոգված դպրոցներին տարեկան մեկ անգամ տրամադրում է գրենական պիտույքներով լի ծանրոցներ:

Դպրոցների վերանորոգման, բարեկարգման աշխատանքներից բացի՝ ՀԿՀ մեծ ուշադրություն է դարձնում ուսուցիչների կրթական և մասնագիտական մակարդակների բարձրացմանը: 2014թ. նոյեմբերին հիմնարկության նախաձեռնությամբ և ֆինանսական աջակցությամբ «Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» գիտակրթական հիմնադրամը Մարտունու թիվ 2 հիմնական դպրոցում շրջանի Մյուրիշեն, Ավդուռի, Հացի, Ննգու, Կաղարծու, Վարանդայի հանրակրթական դպրոցների «Ինֆորմատիկա» առարկան դասավանդող ուսուցիչների համար իրականացրել է վերապատրաստման դասընթացներ, որոնց նպատակն էր իրազեկել ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների, նորամուծությունների մասին, բարձրացնել ուսուցիչների մասնագիտական մակարդակը: Դասընթացին ուսուցիչներին ավելի շատ հնարավորություն էր տրվում զարգացնելու գործնական հմտություններն, առանձնապես նոր ծրագրերի կիրառման մեջ, ինչը հետագայում թույլ կտա կատարելագործել «Ինֆորմատիկա» առարկայի դասավանդման մեթոդիկան պրակտիկայում [13]: Ընդհանուր առմամբ 2014թ. ՀԿՀ աջակցությամբ «Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի» մասնագետները Ասկերանի, Մարտակերտի և Մարտունու շրջաններում վերապատրաստել են «Ինֆորմատիկա» առարկայի 50 ուսուցիչների: Վերապատրաստման դասընթացներն անցած ուսուցիչների դպրոցները Հիմնարկության կողմից որպես նվիրատվություն ստացել են երկուական համակարգիչ [14]:

Կարևորելով տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) դերը Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման գործում՝ ՀԿՀ մեծ աշխատանք է կատարել Արցախի պետական համալսարանում ՏՏ մասնագիտությամբ կրթություն կազմակերպելու ուղղությամբ: 2012թ. բուհում բացվեց «Կառավարման տեղեկատվական համակարգեր» և «Հեռահաղորդակցություն» մասնագիտությամբ բաժին, որտեղ ուսանողները սովորում են անվճար, մի մասը՝ պետպատվերով, մի մասի վարձավճարը փոխհատուցում է ՀԿՀ-ն: Բացի այդ ՀԿՀ-ի կողմից ուղարկված մասնագետները հաճախ են լինում համալսարանում, դասավանդում մասնագիտական առարկաներ, որն էլ նպաստում է նրան, որ ուսանողները լրիվությամբ տիրապետեն ոլորտի նորություններին, առաջնահերթ ուղղություններին [15]:

65 տարի շարունակ Հայ կրթական հիմնարկությունը ֆինանսական օգնություն է տրամադրում տարբեր երկրներում սովորող հայ ուսանողներին և ուսումնական հաստատություններին: ՀԿՀ-ի բազմաթիվ ծրագրերից մեկն է ՀՀ և Արցախի պետական համալսարանների ուսանողներին կրթաթոշակի տրամադրումը՝ տվյալ ուստարվա ուսման վարձի չափով: Կրթաթոշակի տրամադրման չափանիշներն են՝ անապահով ընտանիքների, միայնակ ծնողների երեխաները, մարզերի բնակիչները, Արցախյան ազատամարտիկների զավակները և բարձր առաջադիմություն ունեցողները: Քանի դեռ ուսանողը պահպանում է բարձր առաջադիմություն, նրա ֆինանսական կարգավիճակը չի փոխվում, և նա, կատարելով համապատասխան համայնքային ծառայություն, շարունակում է ՀԿՀ-ի կողմից հաջորդ ուսումնական տարվա համար նույնպես կրթաթոշակ ստանալ:

Այս յուրահատուկ ծրագիրը մեկնարկել է 2007 թվականին՝ 22 անձանց կրթաթոշակով, 2013-14թթ. կրթաթոշակ ստացողների թիվը հասել է 52-ի: 2014-15թթ. ՀԿՀ-ն տրամադրել է կրթաթոշակ 78 հոգու, իսկ 2015թ. աշնանը նախատեսվում է շնորհել ևս 120-ին: Կրթաթոշակի ծրագիրը հաջողությամբ իրականացվում է մեծահոգի հովանավորների շնորհիվ, որոնք տարեկան 1000-ական դոլար են նվիրաբերում յուրաքանչյուր ուսանողի համար [16]: Կան հովանավորներ, որոնք ֆինանսավորում են կրթաթոշակի ծրագրի մեջ մտնող մի քանի ուսանողների: Շնորհիվ այս ծրագրի մի քանի տասնյակ

հայ երիտասարդներ կարողացել են ստանալ բարձրագույն կրթություն և իրենց ներդրումն ունենալ հայրենիքի բարգավաճմանը:

Կրթական ծրագրերից բացի՝ ՀԿՀ-ն իրականացնում է նաև մշակութային ծրագիր: 2012-ից հիմնարկությունը հովանավորում է աստմունքի համահայկական փառատոնի անցկացումը Շուշիում: Առաջին փառատոնի մասնակիցները Հայաստանից, Արցախից և Ջավախքից էին: Երկրորդ տարում՝ 2013-ին միացան նաև Իրանից, երրորդում՝ Լիբանանից, ԱՄՆ-ից, իսկ 2015թ. չորրորդ փառատոնին մասնակցելու էին եկել Ուկրաինայից, Բելառուսից, Իրանից, ԱՄՆ-ից [17]: Նման այցելություններն ու միջոցառումները նպաստում են հայության համախմբման ու պահպանման գործին, հնարավորություն են ընձեռում հայ երեխաներին ծանոթանալու մայր հայրենիքի փոքր հատվածի՝ Արցախ աշխարհի առօրյա կյանքին, պատմամշակութային հուշարձաններին, կապվել նրա հետ:

Հայ կրթական հիմնարկությունն այսօր էլ շարունակում է իր ազգանվեր գործունեությունը հայրենիքում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Եր., 2003, էջ 62:
2. Հայ կրթական հիմնարկություն, Գլենդել, 2005, էջ 10-11:
3. Armenian Educational Foundation, Glendale, 2005, p.3.
4. «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 62:
5. Armenian Educational Foundation, p.4.
6. Այս նյութերը մեզ է տրամադրել ՀՀ-ում ՀԿՀ-ի մասնաճյուղի գործադիր տնօրեն՝ Ստեփան Նալբանդյանը:
7. ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, g.1, կ-11, պ.մ. 50, թ.25:
8. Նույն տեղում, թ. 51:
9. Նույն տեղում, թ. 65-66:
10. Այս նյութերը մեզ է տրամադրել ՀՀ-ում ՀԿՀ-ի մասնաճյուղի գործադիր տնօրեն՝ Ստեփան Նալբանդյանը:
11. ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, g.1, կ-11, պ.մ. 50, թ.56:
12. Նույն տեղում, թ.55:
13. «Ազատ Արցախ», 27 նոյեմբերի 2014:
14. Նույն տեղում, 11 հունիսի 2015:
15. Նույն տեղում:
16. Armenian Educational Foundation. Scholarship Program, March 2015, pp.1-2:
17. «Ազատ Արցախ», 20 օգոստոսի 2015:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայ կրթական հիմնարկության գործունեությունը հայրենիքում

Արարատ Վարդանյան

Հայ կրթական հիմնարկությունը բարեգործական կազմակերպություն է: Հիմնվել է 1950թվականին Լոս Անջելեսում ամերիկահայ համայնքի ներկայացուցիչների կողմից: Նպատակն էր օժանդակել հայկական դպրոցների ստեղծմանը, նյութական օգնություն ցույց տալ ԱՄՆ-ի և սփյուռքի այլ գաղութների հայկական դպրոցներին:

1994թ. Երևանում սկսեց գործել հիմնարկության մասնաճյուղը, որի միջոցով ՀՀ-ում և ԼՂՀ-ում իրականացվում են դպրոցաշինական, կրթամշակութային և այլ բարեգործական ծրագրեր:

РЕЗЮМЕ
Деятельность Армянского образовательного фонда на родине
Арарат Варданян

Ключевые слова: *Армянский образовательный фонд, благотворительность, Республика Армения, Нагорно-Карабахская Республика, строение и восстановление школ, переподготовка учителей, стипендиальная программа, всеармянский фестиваль декламации*

Армянский образовательный фонд является благотворительной организацией. Он был основан в 1950 году в Лос-Анджелесе силами представителей американской диаспоры. Целью являлось способствовать созданию армянских школ, предоставить помощь армянским школам США и диаспор других колоний.

В 1994 году в Ереване стал функционировать филиал фонда, посредством которого в РА и НКР осуществляются программы строительства школ, культурно-образовательные и другие благотворительные программы.

SUMMARY
The activity of the Armenian Educational Foundation in Homeland
Ararat Vardanyan

Keywords: *Armenian Educational Foundation, benevolence, The Republic of Armenia, The Nagorno-Karabakh Republic, school building and restoration, teachers retraining, scholarship program, panarmenian festival of recitation*

Armenian educational foundation is a charitable organization. It was founded in 1950 in Los Angeles by the representatives of the American diaspora. The aim was to contribute to the creation of the Armenian schools, provide assistance to Armenian schools in the United States and other colonies of Diaspora.

In 1994, the branch of the Foundation started its functioning in Yerevan through which the programs of construction of schools, cultural-educational and other charitable programs were implemented in the RA and the NKR.